ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
«ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

REPUBLIC OF ARMENIA
DEPARTMENT OF STATE PROPERTY MANAGEMENT BY THE GOVERNMENT
"AUCTION CENTER" State Not Commercial Company

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
УПРАВЛЕНИЕ ПРИ ПРАВИТЕЛЬСТВЕ
ПО УПРАВЛЕНИЮ ГОСУДАРСТВЕННЫМ ИМУЩЕСТВОМ
"АУКЦИОННЫЙ ЦЕНТР" государственная некоммерческая организация

N 08-394 «07» օգոստոսի 2012թ.

**ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝**
**պարոն Է.Ղազարյանին**

**Հարգելի պարոն Ղազարյան**

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 793-Ա որոշմամբ մասնավորեցվող «Վայոցձորառապաս» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող (100%) բաժնետոմսերի աճուրդային վաճառքը կկայանա ս/թ. սեպտեմբերի 18-ին, ժամը 14:30-ին, «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23): Աճուրդի անցկացման մասին հայտարարությունը հրապարակվել է 02.08.2013թ. «Ազգ» օրաթերթի թիվ 133 (5216) թողարկման մեջ, ինչպես նաև www.azdarar.am և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պաշտոնական www.spm.am կայքերում:

Խնդրում եմ Ձեր աջակցությունը՝ աճուրդի անցկացման վերաբերյալ հայտարարությունը տեղական (մարզային) զանգվածային լրատվության միջոցներով հրապարակելու կապակցությամբ:

Կից ուղակում եմ աճուրդի վերաբերյալ հայտարարության օրինակը:

Առդիր՝ 1 թերթ:

**Տնօրեն՝** **Լ.Գրիգորյան**

Մասնավորեցման գործարքների և
հրապարակային սակարկությունների
կազմակերպման բաժնի պետ՝
Աննա Ակրպյան
հեռ.՝ 23-73-00

375012, ք.Երևան, Դ.Անհաղթի 23, հեռ. (3741) 23-73-00, 24-55-50
375012, Yerevan, D.Anhakht 23, tel. (3741) 23-73-00, 24-55-50
375012, г.Ереван, Д.Анахт 23, тел. (3741) 23-73-00, 24-55-50

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ.
Մուտքի թիվ 3178
«09» 08 2013

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ՝ 2013Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 18 -ԻՆ, ԺԱՄԸ՝ 14:30 -ԻՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՀԱՍՑԵՆ՝ Ք. ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23)

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի N 793-Ա որոշմամբ մասնավորեցման ենթակա «Վայոցձորատսպաս» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող (100 տոկոս) բաժնետոմսերը

| N | Անվանումը | Հասցեն | Գնահատված արժեքը 18.03.2013թ. դրությամբ (դրամ) | Ընկերության պարտավորությունները (հազ.դրամ) | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Վայոցձորատսպաս» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող (100 տոկոս) բաժնետոմսերը | Վայոց ձորի մարզ, քաղ. Եղեգնաձոր, Սևակի 9 | 22654000 | առ 01.01.2013թ.՝ 3950 հազ.դրամ, այդ թվում՝ կարճաժամկետ փոխառություններ՝ 1660 հազ. դրամ, կրեդիտորական պարտքեր՝ աշխատավարձի և աշխատողների այլ կարճաժամկետ հատուցումների գծով՝ 2290 հազ. դրամ, | 22654000 |

***Համաձայն ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 25-ի թիվ 793-Ա որոշման՝***

***- Ընկերության բաժնետոմսերն դասական աճուրդով մասնավորեցումից հետո այլ պարտավորություններ ի հայտ գալու դեպքում վաճառողը պատասխանատվություն չի կրում:***

***- Ընկերությունը 2000-2012թթ. տնտեսական գործունեության արդյունքում վճարման ենթակա շահութաբաժինների գծով պարտավորություններ չունի:***

***- ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետն աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում գնորդի հետ կնքում է մասնավորեցման պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 285067 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաև գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը:***

Աճուրդը կանցկացվի ***դասական (գնի ավելացման)*** եղանակով:

Աճուրդին մասնակցել ցանկացողները պետք է ներկայացնեն՝

- անձնագիր, աճուրդի՝ մասնակցության հայտը,
- ընկերության հիմնադիր փաստաթղթերի պատճենները, եթե հայտ ներկայացնողը ընկերություն է,
- աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, մասնակցության վճարի չափն է ***1132700*** դրամ, վճարների մուտքագրման հաշիվն է՝ թիվ 1 տեղական գանձապետական բաժանմունքի աճուրդի մասնակցության նախավճարի դրամային թիվ **900013145025:**

Աճուրդի մասնակիցները պետք է ձեռք բերեն աճուրդի մասնակցի տոմս, որի գինն է ***5000*** դրամ, աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար (դիտորդների) տոմսի գինն է **3000 դրամ:**

Հայտերն ընդունվում են (տոմսերը վաճառվում են) մինչև ***2013թ. սեպտեմբերի 17-ը ժամը՝ 17:00,*** ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (հասցեն՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23), իսկ դիտորդի տոմսերը վաճառվում են՝ ընդհուպ մինչև աճուրդի սկսվելը:

Աճուրդում հաղթողը պարտավոր է տեղում (30 րոպեի ընթացքում) վճարել իր առաջարկած գնի առնվազն 5 տոկոսի չափով գումար, որը մասնակցության վճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումների չկատարման դեպքում չի վերադարձվում և փոխանցվում է մասնավորեցման հատուկ հաշվին:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին՝ ք.Երևան, Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել 23-73-00 հեռախոսահամարով:

**Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն**